

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՄԱՏԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՈՒԾ ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

1. Արդի հայագիտությունը, մասնավորապես հայոց լեզվի պատմության ավելի հանգամանալից ուսումնասիրությունը, կարծում ենք, կարող է իր որոշակի ներդրումն ունենալ հայ քրիստոնեական եկեղեցու մշակութային ժառանգության նորովի վերհանման ու դնահատման գործում: Նկատի ունենք հատկապես հայոց լեզվի բառապաշարի, մանավանդ տերմինաբանության առանձին, դիտական նոր չափանիշներով վերլուծության և ծաղումնային առնչությունների մեկնաբանության կարևորությունը:

Հայ քրիստոնեական եկեղեցին ունի հարուստ տերմինաբանություն, որն առաջացել է ոչ միայն համապատասխան գրականության թարգմանության բերումով տեղ դրած փոխառությունների և բառային պատճենումների հաշվին, այլև հայերենի բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական (հ.-ե.) ծագման բառերի ու բառային անվանումների նոր իմաստային կիրառության (իմաստային փոփոխության) շնորհիվ: Այդ տերմինաբանության մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ առաքելական եկեղեցին այս հարցում ևս եղել է ավանդապահ: Հայոց լեզվի բառապաշարի շատ երևույթներ ժառանգվում են և նոր պայմաններում դառնում որոշակի հասկացությունների անվանումներ: Ուստի հայ եկեղեցական տերմինաբանությունն այսօր կարող է դառնալ առանձին ուղադրության առարկա՝ կապված հայոց լեզվի պատմության առանձին խնդիրների նորովի լուսաբանման, ըստ հնարավորին առավել ճիշտ լուծման համար:

2. Հայ քրիստոնեական եկեղեցու ժամասացությունը, արարողակարգի շատ երևույթներ, ինչպես նաև սրբասացություններն ու փառաբանումները լեզվական առումով արտահայտվում են հատուկ նշանակումներով: Նկատելի է, որ այնպիսի առաջնային անվանումներ, ինչպիսին են առաւօտ, աստուած, արևագալ, գիշեր, լոյս, մայրամուտ, տէր, ցերեկ և այլն, ունեն վաղնջական նշանակումներ, գալիս են հեռավոր անցյալից: Եվ քրիստոնեական եկեղեցին այդ անվանումներին ոչ այնքան հաղորդել է բոլորովին նոր իմաստ, որքան որ վերաիմաստավորել է իր հավատքին համապատասխան՝ պահպանելով հնդեվրոպական ծագում ունեցող այդ բառերի ամենանախնական իմաստներն ու նշանակությունը: Այսպես, օրինակ, «քրիստոնեության մուտքով դիք բառն ստանում է միայն հեթանոսական աստծու իմաստ՝ ի հակադրություն աստուած բառի. ավելի խիստ հակադրությամբ հեթանոսական աստծու համար ստեղծվում է չաստուած բառը»<sup>1</sup>: Բառագիտական և իմաստաբանական այս ճիշտ մոտեցումով էլ կարելի է

1 Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան. Երևան, 1987, էջ 385:

խոսել մյուս բառերի կամ արմատների մասին, սակայն այստեղ մեր ուշադրության առարկան միայն աստուած բառն է:

3. Հայ. աստուած բառն ունի հնդեվրոպական ծագում, պատկանում է Հայերենի բառապաշարի բնիկ շերտին և ունի մի շարք զուգահեռներ ցեղակից լեզուներում: Սույն ձևակերպումը կարող է ճիշտ լինել, քանի որ ի նկատի ենք ունենում նախկինում եղած մեկնությունների և բացատրությունների տվյալները, հաշվի ենք առնում այս հարցում մինչև այժմ երևան եկած ստուգաբանական փորձերը: Այնուհետև, այս գեպքում ևս հանգես ենք բերում նոր մոտեցում, այն է՝ տվյալ բառի կազմության, նրա հետ առնչություն ունեցող արմատների և բառածևերի պարզաբանման դեպքում առաջնորդվում ենք լեզվաբանական տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքով և ըստ այդմ քննում աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը<sup>2</sup>:

3.1. Հայ մատենագրության մեջ աստուած բառը գործածվել է բավականին հաճախ, այն հայ քրիստոնեական եկեղեցու տերմինաբանության առանցքային, առավել կարևորություն ունեցող միավորներից է: Այդ բառով կազմվել են բազմաթիվ բարդ և ածանցավոր ձևեր, որոնք ևս կիրառությամբ զգալիորեն տարբեր են, գործածության հաճախականությամբ բավականին յուրահատուկ<sup>3</sup>:

3.2. Բառի ծագումն ու իմաստաբանությունը ոչ միայն գրավել են անցյալի հեղինակների և համեմատաբար նոր ժամանակի բանասերների ուշադրությունը, այլև եղել են համեմատական լեզվաբանության, հատկապես հայերենի նախագրային շրջանի պատմության տարբեր լուսաբանմամբ զբաղված թե՛ հայ և թե՛ օտարազգի լեզվաբանների առանձին ուշադրության առարկա<sup>4</sup>:

Մինչև այժմ երևան եկած բանասիրական մեկնությունների, աղբյուրագիտական մեկնաբանությունների և ստուգաբանական վերլուծությունների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ. աստուած բառի վերաբերյալ տարբեր ժամանակներում և առանձին հեղինակների ասածը չի կարելի համարել անառարկելի և վերջնական: Ավելին, գրանք մնում են զանազան կարգի մեկնաբանությունների և բացատրությունների սահմաններում, հանգիստանում են բառի ստուգաբանության, առավել ևս տիպաբանության ամենևին չհաջողված կամ մասամբ հաջողված փորձ:

2 B. D j a h u k i a n. A Variational Model of the Indoeuropean Consonant System. HS (HL), 1990, Band 103: Նույնի՝ Variative Modelle des urindoeuropäischen und der begriff der partiellen parallelen (isoglossen).— "Studia indogermanica", 1997, №1. Վ. Հ ա մ բ ա ռ - ձ ու մ յ ա ն. Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության. Երևան, 1998: V. G. H a m b a r d z u m y a n. Linguistic Variations and the Investigations of the Phonemic Variants of Old Armenian Literary Language.— "Sixieme Colloque Internationale de Linguistique Armenienne. Abstracts". Paris, 1999.

3 Մ ի ի թ ա ռ Ս ե բ ա ս տ ա ց ի (և աշակերտներ). Բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲՀ), հ. 1-2, Վենետիկ, 1749-1769, Գ. Ա և Ե տ ի ք Ե ա ն, Ն. Ս ի ւ ռ մ է լ Ե ա ն, Մ. Ա և Գ Ե ռ Ե ա ն. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837, էջ 320-333:

4 Ավելորդ ենք համարում այստեղ մեկ առ մեկ նշել հարցին վերաբերող գրականությունը, մանավանդ որ զրանց անդրադարձել են նախորդ ուսումնասիրողները (տե՛ս ստորև):

3.3. Աստուած բառի մեկնութեան և բացատրութեան, այլև ստուգաբանութեան պատմութեանն անգրագարձել են տարբեր հեղինակներ, հատկապես Հ. Աճառյանը և Յու. Հիլմարսոնը<sup>5</sup>: Այս հանգամանքը նշում է նաև Գ. Զահուկյանը<sup>6</sup>, և կարելի է ավելացնել, որ հետազայում ևս երևան են գալիս նույն խնդրի լուծման նպատակով գրված աշխատանքներ<sup>7</sup>:

ա) Մի կողմ թողնելով հին հեղինակների այն մեկնաբանութիւնները և մեկնութիւնները, որոնք այլ բան չէին, քան աստուած բառի արտաքին նկարագրութիւնը (աստուած<աստ ած կամ էած, ազդու ած, ազդուած, նաև՝ հաստիչ կամ աստ, յաստիս ածող, աս «ասել, խոսք, շունչ» և տուած «տովող» և այլն), հետագա հեղինակների այս կամ այն մոտեցումը, որոնց համաձայն հայ. աստուած բառը կապվում է իրանական, թրակյան կամ փոյուզիական այս կամ այն ձևի հետ (հմմտ. Աթահակ, ղենդ. *astavant*, այլև *astvat*, փոյուզ. *Asduat* «Աստված», թրակ.-փոյուզ. *Σαβαξιος*, *Σαβαθιος* և այլն)<sup>8</sup> կարծում ենք, որ հարցի լուծման առումով համեմատաբար ճիշտ ճանապարհով են գնացել: Սակայն վերջնական լուծում չեն գտել այն ուսումնասիրողները, որոնք հայ. աստուած բառի մեջ տեսել են հայ. \*տու կամ \*տուած բաղադրիչը՝ իբրև առանձին միավոր, այն կապելով հնդեվրոպական մյուս լեզուների այս կամ այն ձևի հետ, այլև բխցնելով Հ.-ե. \*diu- արմատից: Վերջին դեպքում նկատի ունենք հնդեվր. վրդ. Շահնագարյանի, իսկ նոր հեղինակներից՝ Վ. Պիդանիի մոտեցումը<sup>9</sup>:

բ) Ուշագրավ է Վ. Պիդանիի մոտեցումը՝ հայ. աստուած բառի համար վերականգնել Հ.-ե. \**lag'i-diu-ag*՝ ձևը, որտեղ կարևոր է Հ.-ե. \**diu*- բաղադրիչի առանձնացումը: Հետագա ուսումնասիրողները չեն ընդունում նման վերականգնումը<sup>10</sup>:

գ) Գ. Զահուկյանը հայ. աստուած բառի ստուգաբանութիւնը տալիս է նախ՝ երկու կարգի հավանականութեան սահմաններում. «Թեև ստուգաբանութեան եղած փորձերը չի կարելի վերջնական համարել, բայց բոլոր գեպքերում էլ գերագասելի են բուն հայերենով մեկնաբանելու փորձերը. մասնավորապես մեզ հավանական է թվում այդ բառի տու-ի (\*տիւ) մեջ տեսնել Հ.-ե. \**diu* «երկնքի հայր, աստված» արմատը և առաջին մասը կապել Հ.-ե. *ansu*- հիմքի հետ, որտեղից ծագում են ՀՀՆԴԿ. *asu-ra-*, ավեստ. *ahura* «իշխող» բառերը (վերջինիցս ծագում է Ահուրամազդայի անունը, որից հայկական Արամազդը): Անհավանական չէ նաև (հ)աստուած «ի

5 Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. 1, Երևան, 1971, էջ 280-281: J. H i l m a r s s o n. Armenian astuac "God".- "Annual of Armenian Linguistics", vol. 4, 1983, pp. 5-15.

6 Գ. Զահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարանում.- «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1986, №1, էջ 51-52:

7 Տե՛ս, օրինակ, E. P. H a m p. Remarks on astuac.- "Annual of Armenian Linguistics", vol. 5, 1984, pp. 87-89.

8 Հ. Աճառյան. ՀԱԲ, էջ 281: V. P i s a n i. Der Gott als "Verteiler" und armenisch Astuac.- "Lingue e Culture", 1969, p. 257-269, տե՛ս նաև «Հանդէս ամսօրեայ», 1961, 75, էջ 549-562:

9 J. H i l m a r s s o n. Նշվ. աշխ., էջ 6-7, E. P. H a m p. Նշվ. աշխ., Գ. Բ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմութիւն, նախագրային ժամանակաշրջան, էջ 274:

Հաստումն ածող, Հաստող, Հաստատող» մեկնաբանությունը, եթե ենթադրենք Հին «ածող, բերող» իմաստով (Հմմտ. դրաբարյան գլխած «գլխացող» և ողորմած «ոգորմացող»)»<sup>10</sup>: Այնուհետև, Գ. Ջահուկյանը գտնում է, որ աստուած բառը կարող է ունենալ փոքրասիական ծագում. «Աստուած բառի ծագումը պարզ չէ. կան Հնդեվրոպական (\*iagʰ-diū-agʰ - Պիզանի), փոյուգիական (Հմմտ. Σαβαξιος - Մառ), իրանական (Լագարգ), փոքրասիական (Ջահուկյան), ուրարտական (Հմմտ. ուրարտ. Astiuzi - Մելիքիշվիլի) ծագման վարկածներ: Հայկական դիցարանի և դիցաբանությունների վրա ղգալի է նաև փոքրասիական և սեմական ազդեցությունը»<sup>11</sup>:

Հարկ ենք համարում նշելու, որ Հայ. աստուած և (Հ)աստուած բառերի միջև կապ տեսնելը դալիս է ավելի վաղ ուսումնասիրողներից<sup>12</sup>, և նման կապն իրոք վերջնական և իրական չէ, այլ մնում է Հավանականի սահմաններում: Այնուհետև, նման կապ տեսնողները որևէ նախաձեռն չեն վերականգնում, թեև Հ. Պեդերսենը, ոչ անկախ Ֆ. Կուլգեից, մատնանշում է ցեղակից լեզուների այս կամ այն ձևը<sup>13</sup>:

դ) Գ. Մելիքիշվիլին փորձել է Հայ. աստուած բառը կապել ուրարտ. Astiuzi «աստված, աստծու պատկեր» բառի հետ, որը հանդիպում է Արգիշտիի մի արձանագրության մեջ<sup>14</sup>: Կարելի է հակառակը կարծել, այն է՝ ուրարտ. Astiuzi բառի աղբյուրը Հայ. աստուած ձևն է: Այսպես կարծելու հիմք են հանդիսանում ոչ միայն ուրարտական արձանագրությունների բնագրերի նոր մեկնաբանությունն ու գրանցում տեղ գտած ձևակերպումների ստուգաբանությունը, այլև խեթական լեզուների ուսումնասիրությունը, հայասերենին վերաբերող տվյալների մեկնաբանման հետ կապված նոր աշխատանքների արդյունքները: Այսպես, բոլորովին վերջերս Գ. Ջահուկյանը գրեց այն մասին, որ «ուրարտագետների ընդհանուր ջանքերով առանձնացվել է սեպագրական նշանների ընթերցանությունը տարբերակներից մի որոշակի ստանդարտ, որ կիրառվում է եղած տեքստերի նկատմամբ: Այդ տարբերակների հետագա քննությունը, համեմատությունն ու վերականգնված ստանդարտի ճշգրտումը, այլև սրա հետ կապված սեպագիր տեքստերի արտալեզվական ուղղվածությունը հմուտ վերլուծությունը կարող են շատ բան տալ և նույնիսկ հեղաշրջող նշանակություն ունենալ»<sup>15</sup>: Տվյալ դեպքում ուրարտ. Astiuzi ձևն արտացոլում է Հայ. աստուած բառի հնչյունական այն վիճակը (Հմմտ. ս>չ, ու>իու, ծ>զ հակադրությունը

10 Գ. Բ. Ջահուկյան. Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 52:

11 Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 274:

12 Գ. Ալեքսանդրյան, Ս. Սիլբերմեյեր, Մ. Ալգերեան. ՆԲՀ, հ. 1, էջ 320:

13 H. Pedersen. Zur akzentlehre. – "Zeitschrift für vergleichende Sprachforschung", 39, 1906, SS. 239, 243. I d e m. Kleine Schriften zum Armenischen, Hildesheim-New York, 1982, SS. 107, 111. Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. 1, էջ 281:

14 G. Melikishvili. Urartu und das südliche Transkaukasien – "Georgica", Jena-Tbilisi, 1980, SS. 35–36.

15 Գ. Ջահուկյան. Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին. – ՊԲՀ, 2000, №1, էջ 128:

յունները), որում կարող էր ինչ-որ չափով գեր խաղալ սեպագրական ստանդարտի հետ կապված առանձնակիությունը:

4. Հայերենը հնդեվրոպական այն լեզուներից է, որի գրավոր աղբյուրների, ինչպես նաև ոչ գրական տարբերակների (բարբառների) տվյալները հարկադրում են համեմատական ուսումնասիրության այնպիսի նոր մոտեցման մշակման, ինչպիսին է տարբերակայնությունը (վարիատիվությունը)<sup>16</sup>: Հայերենի գործառական և տարածքային բոլոր շերտերին վերաբերող լեզվական միավորների տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրությունը մեծապես նպաստելու է ոչ միայն հավաստի ստուգաբանություն չունեցող, այլև ամենևին չստուգաբանված բառարմատների և քերականական ձևերի տարբերակված վերլուծության և ստուգաբանության, տիպաբանական վերականգնման և բնութագրման գործին:

ա) Հ. Հյուբշմանի և նրա հետևողները հետագա ուսումնասիրողների աշխատություններն այս առումով հասել են ամբողջական և գրեթե սպառելի մի վիճակի, որն այսօր կարող է միայն ամուր հիմք հանդիսանալ նոր մոտեցումներով ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար<sup>17</sup>: Ի տարբերություն Հյուբշմանի ուսումնասիրության սկզբունքների, որոնք մեզանում լայն ընդունելություն են գտել և դարձել են խիստ ավանդական, հայերենի տարբեր կարգի երևույթների ուսումնասիրության գործում նոր, տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրությունը կարող է որոշակի հեռանկար ունենալ հատկապես հայոց լեզվի անհայտ ծագման բառերի առումով:

բ) Հնդեվրոպական ծագման հայերեն մի շարք բառեր ու բառաձևեր երևան են դալիս երկու և ավելի տարբերակներով կապված ոչ միայն ձայնավորների տարբեր աստիճանի փոփոխության (ձայնդարձի), բաղաձայնների նախորդող դիրքում դրանց երկբարբառացման (ձայնավոր +յ կամ ւ ձայնորդ), ինչպես նաև բաղաձայնների հերթագայության, պատմական զարգացման ընթացքում դրանց հնչարտաբերական տարբերակվածության հետ: Այսպես, օրինակ, առու- ոռոգ(անեմ), առոգ(անեմ), արև- արեգ(ակն), գայռ «ցեխ, տիղմ» - գոռ «ցեխ, գայռ», լիճ -լիկ «ավազան, լիճ», լափու(կ) (բբռ.)- լեփան (բբռ.), «տափակ քար», խուլթ «ծովաժայռ» - խուչ (բբռ.), խոչ(ընգոտ), հոլոսեմ -հոռոսեմ «ոռոգել», մայր -մու(այլ) «մուլթ, խավար», շող -(ն)շոյլ, պալ «քար» - փաղ, պղպղաքար, տիլ «ցեխ, տիղմ» - տիլ(մ), քերծ-քուրչ «քերծ, ժայռ» բառերը հայերենում ներկայացնում են ժամանակային, տարածքային և գործառական որոշակի տարբերակայնություն<sup>18</sup>: Նման երևույթների ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում հաստատելու հնչյունական այնպիսի նոր օրենքներ, որոնք կարող են դառնալ միջոց հայերենի տարբերակային ուսումնասիրության համար:

գ) Այստեղ հարկ ենք համարում նշել, որ հայերենի բառարմատների առանձին քննությանն անդրադարձել է Գ. Զահուկյանը՝ հարցին նվիրելով

16 V. G. Hamardzumyan. Նշվ. աշխ., էջ 25:

17 Նկատի ունենք Հ. Հյուբշմանի և նրա դպրոցին հետևող լեզվաբանների կարևորագույն աշխատությունները, որոնց թվարկումն առանձնապես կարևոր է, որովհետև դրանք մեծապես հայտնի են, առավել չափով շրջանառության մեջ դրված:

18 Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 206-207:

ոչ միայն ընդհանուր բնույթի, այլև հատուկ աշխատություններ<sup>19</sup>: Դրանցում ներկայացվում է լեզվական հարուստ նյութ, թեև վերջինս չի հասնում սպառիչ վիճակի, որովհետև հայերենում այդ կարգի լեզվական իրողություններն անհամեմատ մեծ թիվ են կազմում: Իսկ դրանց ուսումնասիրությունն մեջ նոր մոտեցման գործադրման դեպքում կարող է պարզվել, որ զարգացման տեական պատմություն ունեցող հայերենն այս դեպքում ևս ներկայացնում է առավել չափերի հասնող փաստեր ու տվյալներ:

դ) Հայերենի թե՛ նախազրային և թե՛ դրավոր փուլերում երևան եկած տարբերակային ձևերն, անշուշտ, ծագումնային և տիպաբանական քննության առարկա կարող են լինել ոչ միայն ձևական (հնչյունական), այլև իմաստային (արմատի կամ բառի հիմքում ընկած երևույթի անվանման) նկատառումով: Այս տեսակետից էլ, կարելի է ասել, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ. աստուած բառի ծագումն ու տիպաբանական բնութագրումը:

5. Հայ. աստուած բառը թե՛ ձևով (բառակազմորեն) և թե՛ իմաստով (հին աշխարհին բնորոշ հասկացության անվանում) կարող է ստուգաբանվել հայերենի միջոցներով և տիպաբանորեն հիմնավորվել ցեղակից լեզուների մեջ առանձնացվող նոր տվյալներով: Վերջիններս միաժամանակ նպաստում են հայերենի դեռևս անհայտ ծագման արմատների ստուգաբանման, ինչպես նաև այս կամ այն կերպ ստուգաբանված արմատների ձևային և իմաստային ճշգրտման գործին:

Աստուած բառն ունի ոչ թե պարզ, այլ բառակապակցորեն բարդ կազմություն: Եվ տվյալ դեպքում հաշվի ենք առնում ոչ միայն այդ, այլև հետևյալ հանգամանքները:

ա) Նման կազմություն ունեցող բառի ծագումնային բացահայտման, տիպաբանական վերլուծության իրական հիմք է հանդիսանում հ.-ե. լեզուների հետ անցկացվող հնչյունական և իմաստային համեմատությունը:

բ) Հայերենի բնիկ բառապաշարի մեջ աստուած բառն ունի առաջնային նշանակություն՝ կապված հ.-ե. ընդհանրությունից եկող հասարակական կառուցվածքի և հոդերը ըմբռնումների մեջ աշխարհի առասպելական և դիցական պատկերի ձևակերպման հետ:

գ) Հայ. աստուած բառի նոր, տարբերակային (վարիատիվ) մեկնաբանության մեջ կարևոր տեղ ունեն ցեղակից լեզուների կրող ժողովուրդների առասպելաբանական և դիցաբանական տվյալները, որոնց զուգահեռներն ու համընկումները դտնում ենք հայոց բանավոր, այլև դրական հուշարձանների միջոցով մեզ հասած ավանդությունների մեջ:

5.1. Հայ. աստուած բառն ամենից առաջ ուղադրության առարկա է իր ծագմամբ: Այն կազմության բարդ (բազմաբաղադրիչ) բառ է, որից առանձնացնում ենք առաջին հերթին \*տուած բաղադրիչը. հմտ. խեթ. Siuaz «ցերեկվա աստվածություն», պալ. Tiuz «նույնը», լուվ. Tiuat

19 Г. Б. Джаякян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, с. 300–313. G. B. Djajukjan. On Etymological Doublets and Parallels of Armenian. – "Annual of Armenian Linguistics", vol. 4, 1983, pp. 23–34.

«(երկնքի) աստված», ՀՀնդ. Dyauh «երկինք», Հուն. Ζεύς (սեռ. Հոլ. Διός) «աստված», լատ. deus (Հլատ. Diouis) «աստված» և այլն<sup>20</sup>:

Այս ձևը նույնպես բաղադրելի է, քանի որ ծագումնաբանորեն առնչվում է ցեղակից լեզուների այնպիսի ձևերին, որոնք առհասարակ արտահայտում են «աստված» իմաստը՝ ի վերջո կապվելով «լույս տալ», «փայլել», «ճառագել» (նաև՝ «թվալ», «երևալ») իմաստներին<sup>21</sup>: Ըստ այսմ, Հայ. \*տուած, այլև (աս)տուած անվանումները նախնական իմաստով նշանակում են «լույս», «լույս տալը»:

ա) Հայ. \*տուած ձևի մեջ առանձնացնում ենք \*տու (Հնչումով՝ \*տոու) արմատը, որին զուգահեռ են խեթ. sius (Հայց. Հոլ. siun, սեռ. Հոլ. siunas, Հմմտ. Հայ. Սանաս-ար) «աստված», լուվ. 𐎎𐎗𐎚 Tiuz «աստված» ՀՀնդ. Dyauh «աստված» (նաև՝ dyauh «երկինք», Հմմտ. ուրարտ. Diauhi, որը թերևս փոխառություն է միտ. արիերենից, կամ վերջինիս միջոցով Հայերենից), Հուն. Ζεύς «(երկնքի) աստված» (սեռ. Հոլ. Διός), միկ. Հուն. di-we, Հլատ. Diouis (սեռ. Հոլ. Jouis) «Յուպիտեր», օսկ. Diuvei «Յուպիտերին» և այլն<sup>22</sup>:

բ) Բերված ձևերի հիմնական մասն, իբրև «երկնքի կամ արևի աստված» Հասկացության անվանում, ցեղակից լեզուներում հանգես է գալիս որպես Հատուկ անուն: Դրանց համար վերականգնվում է (ընդհանուր իմաստով) Հ.-ե. \*t̥ieũ- «աստված» բառարմատը: Վերջինս ունի իր կանոնավոր ձայնավորմամբ Հ.-ե. \*t̥ieũ- տարբերակը. Հմմտ. ՀՀնդ. deva- «աստված», ավեստ. daeva- «գե», լատ. deus «աստված», divus «աստվածային», Հիւլ. dia (սեռ. Հոլ. di) «աստված», Հիւլ. tívar «աստվածներ», պրուս. deiws «աստված», լիտ. diėwas «աստված» և այլն<sup>23</sup>: Այս ձևից է թերևս նաև Հայ. դի-ք (<\*տի-եւ, Հնչումով՝ \*աի-եու) «աստվածներ» բառը<sup>24</sup>: Ինչպես նկատում ենք, Հ.-ե. վիճակի համար վերականգնվում է տարբերակային արմատ՝ \*t̥ieũ- և \*t̥eiu «աստված»:

գ) Այնուհետև, արմատի մյուս երրորդ տարբերակն է Հ.-ե. \*t̥ieũ- «աստված» ձևը, որի համար նախնական էր «օր» իմաստը<sup>25</sup>: Վերջինս լավագույնս արտացոլված է անատոլիական լեզուներում, այլև Հայերենում:

20 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, 1-2, Тбилиси, с. 36, 46, 223, 226-227, 242, 777.

21 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 791: K. W a t k i n s. "God", "Antiquitates Indogermanicae", Innsbruck, 1974, ss. 101-110.

22 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 227, 791:

23 Նույն տեղում, էջ 791:

24 Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 49:

25 Վ. Պիզանին և Գ. Զահուկյանը վերականգնում են Հ.-ե. \*diu-, \*diu- «երկնքի Հայր, աստված» արմատը: S b u V. P i s a n i. Նշվ. աշխ., Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայկական շերտը... էջ 52:

Հմմտ. անատ. \*Tiu- (խեթ. Siu-, լուվ. Tiua-, այլև Tiuat- «արևի աստված», պալ. Tia- և այլն), ինչպես նաև (ըստ իս)<sup>26</sup> հայ. տիւ «ցերեկ», թերևս նաև՝ ուրարտ. Siu(inə) «աստված» (դիցանուն)<sup>26</sup>, խուռ. Simigi): Գ. Ջահուկյանը հայ. տիւ-ը բխեցնում է հ.-ե. \*dei- ձևից<sup>27</sup>: Ավելացնենք, որ հ.-ե. \*t̥iu- արմատի այլ լեզուներում առկա արտացոլումներից են՝ հհնդ. div-, divya- «աստվածային» (Հմմտ. հայ. տուրնջեան), հուն. δῖος, լատ. dius (<\*diuios «աստվածային»)՝<sup>28</sup>:

Ըստ այսմ, հ.-ե. նախալեզվի համար վերականգնվում է տարբերակային երեք վիճակ՝ արմատի ձայնավորման տարբեր աստիճաններով, որոնք ոչ միայն մյուս լեզուներում, այլև հայերենում ունեն իրենց վաղնջական արտացոլումները, և գրանք կարող են վերլուծութայան առնվել արմատակազմութայան մեջ կիրառելի տարբերակայնութայան (վարիատիվութայան) սկզբունքների գործադրումով:

5.2. Ինչպես տեսնում ենք, հ.-ե. ընդհանուր վիճակի համար վերականգնվող տարբերակային արմատներից միայն մեկն է, որ ավելի հին է, իսկ մյուսները հանդիսանում են նրա հետագա ձևացումները (տարբերակները). Հմմտ. \*t̥iu-, այլև \*t̥ieu-, \*t̥eiu-:

ա) հ.-ե. \*t̥ei-u- > հայ \*տեյ- (հնչմամբ՝ \*տեյ-ու) և \*t̥i-eu- > հայ. \*տի-եւ (հնչմամբ՝ \*տի-եու) ձևերը ներկայացնում են հնդեվրոսյական արմատի ձայնավորման աստիճանները՝ իբրև ձայնդարձի առաջին և երկրորդ աստիճաններ: Այլ կերպ ասած՝ լծորդային հիմքեր են, որոնք ենթադրում են լրիվ և զրո աստիճան<sup>29</sup>: Հմմտ. ուրարտ. Siu(inə, նաև հայ. Շի(ն)ու- (Հ)այր (հետագայում տեղանուն):

բ) Հայերենի առումով այստեղ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը: Համեմատաբանների մի մասն առաջին աստիճանը դիտում է երկրորդային (ավելի ուշ գրանցմամբ բնութագրվող): Իսկ մյուսները գտնում են, որ առաջին աստիճանի հիմքերից կազմված, այսպես կոչված, արևատիվ հոլովից առաջացած ձևերը, ունենալով նաև հ.-ե. \*-n- ածանց (հավելյալ հ.-ե. \*-u-//\*-eu- ածանցներին), հավաստում են այն, որ տվյալ դեպքում գործ ունենք նախ՝ այդ ածանցով բառերի տարահիմք (հետերոկլիտիկ) հոլովման հետ (Հմմտ. հայ. մանուկ > մանկան <՝ մանուկն, աղջիկ > աղջկան <՝ աղջիկն և այլն), երկրորդ՝ առաջին աստիճանի ձևը գոյություն է ու-

26 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. *Նշվ. աշխ.*, էջ 792: Գ. Ջահուկյան. *Հայկական շերտը...* էջ 45, 48-49:

27 Գ. Ջահուկյան. *Հայոց լեզվի պատմություն*, էջ 57, 84: Ն ու յ ն ի՝ *Հայկական շերտը...* էջ 45:

28 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. *Նշվ. աշխ.*, էջ 242:

29 Երկրորդ դեպքի համար Հմմտ. է. Բենվենիստի «երկանդամները» («բինոմները»): Sté E. Benveniste. *Origines de la formation des noms en indo-européen*. Paris, 1935. pp. 170-171.



նեցել նաև հ.-ե. ընդհանրության շրջանում, թեև այդուհանդերձ այն ավելի ուշ գոյացում է, քան երկրորդ աստիճանինը<sup>30</sup>:

զ) Այս երկրորդի օղաին է խոսում այն փաստը, որ հ.-ե. \*t'i-eu-> հայ. \*տիեւ (հնչմամբ՝ \*տիեու) ձևից առաջացած և նախահայերենում գործածված տիւ (հնչմամբ՝ \*տիու) բառը հին դրական հայերենում հոլովվում է տարահիմք (հետերոկլիտիկ) հոլովմամբ՝ տիւ-տու(ը)ն-ը-եան (հմմտ. սիւ-դիւ-դի վաղ(ը)ն-ը-ենէ), որ նշանակում է, թե նախագրային շրջանում տիւ, վաղիւ և այլն ձևերն ունեցել են այդ -ն ածանցը (հ.-ե. \*n): Ըստ այդմ վերականգնում ենք հայ. \*տիւն (հնչմամբ՝ \*տիուն) < \*տիեւն (հնչմամբ՝ \*տիեուն)<sup>31</sup>: Այս ձևի մեջ, իր հերթին, առանձնացնում ենք նախ՝ -ն (< հ.-ե. \*-n), այնուհետև՝ -ւ-// -եւ- (< հ.-ե. \*-u-// \*-eu - ածանցները, որոնք հետագա ձեռքբերում են և \*տի- արմատից գոյացնում են \*տիւ-// \*տիեւ տարբերակները, որոնք էլ, իրենց հերթին, հիմք են հանդիսանում -ն ածանցով ձևերի վերակազմավորման:

դ) Իսկ հ.-ե. - \*t'iu- արմատից ունենք ոչ միայն հայ. տիւ «օր» բառը (հմմտ. իսթ. *siuatt*- «օր», լատ. *dies* «օր», հիոլ. *dīe* «օր», այլև հհնդ. *diva* «ցերեկը», հմմտ. *nāktam-divam* «գիշերուզօր»<sup>32</sup>, հուն. *ἔγδιος* «կեսօրին», լատ. *dius* «ցերեկը»<sup>33</sup>, ինչպես նաև հայ. \*տու- (հնչմամբ՝ \*տոու) ձևը, որը ոչ այլ ինչ է, քան բառակազմական հիմքի ձայնափոխությունը առաջացած տարբերակ, այն է՝ տիւ-//տո-ւ (հնչմամբ՝ \*տիւ-ու//տո-ու):

ե) Եվ վերջապես, հ.-ե. \*t'ei-u- տարբերակից, որն ավելի ուշ ձևացում է, քան մյուս տարբերակները (հատկապես՝ \*t'iu-)<sup>34</sup>, թերևս ծագում է հայ. տեւ-եմ (< \*տեիւ-եմ, հնչմամբ՝ \*տեիու-եմ) բայի տեւ(\*տեիւ, հնչմամբ՝ \*տեիու) «ցերեկը, ցերեկվա տեղությունը» արմատը, որին այստեղ չենք անդրադառնում:

5.3. Հայ. \*տու//տիւ բառ(արմատ)ի տարբերակային վերականգնումը և ըստ հնարավորին լիարժեք ստուգաբանությունն ամենից առաջ բխվում են հ.-ե. ընդհանրության շրջանից եկող արմատի ածանցավոր և անածանց տարբերակների առանձնացմանը: Այլ կերպ ասած՝ մի կողմից գործ ունենք «ձայնավոր» արմատների՝ \*t'ieu-, \*t'eiu-, իսկ մյուս կողմից՝ «անածանց» (Schwebeablaut) արմատի՝ \*t'iu-, տարբերակների՝ ընդհանրության շրջանում ունեցած հարաբերակցային դործրնթացի հետ:

Բերենք այս վարկածը հիմնավորող նաև հետևյալ օրինակները:

30 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 226–227. Վ. Գ. Հ ա մ բ ա ր ձ ու մ յ ա ն. Հայերեն աղջիկ բառի ստուգաբանությունը, – ՊԲՀ, 1997, №2, էջ 149–152:

31 Հմմտ. նաև՝ \*վաղիւն (հնչմամբ՝ \*վաղիուն) < \*վաղիեւն (հնչմամբ՝ \*վաղիեուն):

32 Հմմտ. նաև սանս. *dive-dive* «օրեցօր» (տե՛ս А. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1936, p. 50, Т. Барроу. Санскрит, М., 1976, с. 264):

33 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 791:

34 Նույն տեղում, էջ 241–242:

Հմտ. մի կողմից՝ հ.-ե.  $\bar{p}^{[h]}el-H >$  հայ. հեզ-ոււմ, այլև հեզ-անիւմ, հեզ-եղ (\*հեզ-հեղ), հեզ-ուկ, (զ)եղ, հեզ-իք, թերևս նաև հեզ-ինակ, հեզ-ոյս և այլն, հ.-ե.  $\bar{p}^{[h]}el-H >$  հայ. յղ-անամ//յղ-ենամ, այլև լի(\*ղի//յ-ղի) և լը-նում (\*լի-նում) և այլն, իսկ մյուս կողմից՝ հ.-ե.  $*p^{[h]}-H >$  հայ. հաղ-որդեմ, թերևս նաև միա-հաղ-ոյն և այլն<sup>35</sup>:

Հմտ. մի կողմից՝ հ.-ե.  $\bar{p}^{[h]}erk^{[h]} >$  հայ. փեսայ (ըստ իս՝ \*փերսայ)<sup>36</sup>, ինչ-պես նաև հ.-ե.  $*p^{[h]}rek^{[h]} >$  հայ. հարսն (\*հարց-ն), ընդ որում փեսայ (\*փեր-ձայ) տարբերակն ավելի հին կարող է լինել, քան հարսն տարբերակը (իմա՝ փ//հ տարբերակայնություն), իսկ մյուս կողմից՝ հ.-ե.  $\bar{p}^{[h]}rk^{[h]} >$  հայ. փորձ (ամենահին իմաստով՝ «քննում, հարցում, հարս ուզող»)՝<sup>37</sup>: Ստացվում է, որ հայ. հարցուփորձ բառն իր կազմով շատ հին է, տարբեր սեռերի ֆունկցիա կրող իմաստների (միևնույն՝ ընդհանուր իմաստի տարբերակները) կրկնությունը կազմված բարդ բառ (վաղնջական իմաստը՝ «զուգակիցների միասնացում և այլն»)։

Ըստ այսմ անհրաժեշտ ենք համարում նշելու այն իրողությունը, որ հ.-ե. լեզուներից հատկապես հայերենը ներկայացնում է ոչ միայն ընդհանրության շրջանից եկող, այլև ինքնուրույն զարգացման ընթացքում առաջացած արմատական տարբերակայնություն։ Այլ կերպ ասած՝ հայերենի հնագույն (վաղնջական) ժամանակաշրջանում պիտի եղած չլինեն հ.-ե.

\*tʰi-, \*tʰje-, \*tʰe- և արմատներին համարժեք ձևեր՝ իբրև դրանց տարբերակային արտացոլումներ, որոնք էլ լեզվի զարգացման ընթացքում կարող էին տեղիք տալ նոր տարբերակայնության։ Թե՛ մեկ և թե՛ մյուս կարգի տարբերակները հին հայերենում ներկայանում են ոչ միայն բառային ձևի (հիմքակազմություն), այլև իմաստի հետ կապվող բազմազանություն, որը պայմանավորված է հնից եկող, ինչպես նաև զարգացման պատմական և մշակութային նոր հանգամանքներով։ Հյուսիսայինը և նրա դարձի ներկայացուցիչները գործ են ունեցել միայն հին դրական հայերենի մեջ տեղ գտած փաստերի հետ, իսկ դրանց առաջացման և տարբերակվածությունը խնդիրը դուրս է մնացել ավանդական ուսումնասիրությունների ոլորտից։

ա) Հ. Աճառյանը, ոչ անկախ Հ. Հյուսիսայինից և Ա. Մեյերից, հայերենում առանձնացնում է տի «օր», տի «տարիք հասակ», տի «ցերեկ, ոչ դիչեր» և տի (հնագույն գրչություն՝ տեր, այլև տերութիւն < տիրութիւն. հմտ. հայ. լեզու < \*լիզու, լատ. lingua < \*dingua «լեզու») «տեր, մեծ», նաև՝ «աստված» բառերը՝ իբրև հ.-ե. ծագման, ընդհանուր աղբյուրից բխող տարբերակային ձևեր՝ իմաստային որոշակի տարբերակվածություն։ Աճառյանը նույնպիսի ծագման է դիտում նաև հայ. դիք «աստվածներ» բառը, այնինչ հայ. դեւ «հոգի» բառը համարում է իրանական փոխառություն, իսկ հայ. դիւթ «վհուկ, կախարդ» բառը տալիս է որպես «անստույգ

35 Նույն տեղում, էջ 237–241: Հ. Աճառյան. ՀԱՐ. հ. 3, էջ 76–77: Գ. Զահարյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 114, 142–143, 393, 399:

36 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. *Նշվ. աշխ.*, էջ 176, 241: Հ. Աճառյան, *Նշվ. աշխ.*, հ. 4, էջ 520–521, Գ. Զահարյան. Հայոց լեզվի պատմություն, էջ 143, 214:

37 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов. *Նշվ. աշխ.*, էջ 176, 241:

բառ»<sup>38</sup>: Ավելին, տիեզերք և տիկին բառերի աի բաղադրիչը գիտվում է իբրև «մեծ» իմաստի կրող, որն ամենայն հավանականությամբ ավելի նախնական չէ, քան «երկինք» և «երկնքի աստված» իմաստները: Եվ ըստ այսմ, կարծում ենք, որ միանգամայն հասկանալի է գառնում երեմիա Մեղրեցու բառարանում (էջ 311) հանդիպող, հիշյալ տի արմատի պարզ և երկբարբառային ձայնավորմամբ արմատական տարբերակներից կրկնավոր բարդություն հանդիսացող տիք եւ տայք բառը, որ Աճառյանը բերում է բառարանի «խորխոր կոչին» իմաստային նշանակումով<sup>39</sup>:

բ) Գ. Զահուկյանը, հենվելով նաև նախորդ ուսումնասիրությունների տվյալների վրա, գտնում է, որ մի կողմից՝ հ.-ե. ընդհանուր \*dei- ձևի կոնկրետ տարբերակներից են բխում հայ. տէ, տի «օր» (սրանց հետ նաև տէր, տիկին), տիւ «օր, ցերեկ», ինչպես նաև երկին «երկինք», (ս)երկ «այ-սօր», իսկ մյուս կողմից՝ հ.-ե. ընդհանուր \*deu- ձևի կոնկրետ տարբերակներից՝ հայ. տեւեմ «երկարել, ձգվել», տոկ «տեւականություն, դիմացկունություն», երկար «տեւական, ձգված», երկայն «երկար» ձևերը<sup>40</sup>: Այստեղ նկատենք, որ գրանցից, օրինակ, երկին ձևը նշվում է հարցականով, և դա, իրոք, այդպիսին է՝ անկախ այդ բառի ծագման վերաբերյալ գոյություն ունեցող բաղմամբիվ ստուգաբանական փորձերից<sup>41</sup>:

գ) Հ.-ե. \*t'iu-, \*t'ieu- և \*t'eiu- տարբերակային արմատները, բնականաբար, ունեցել են իրենց արտացոլումները վաղնջական (հ.-ե. ընդհանրություններից առանձնացած և ինքնուրույն զարգացման ուղին բռնած) հայերենի մեջ: Այդ արտացոլումներին այստեղ առանձին-առանձին չենք անդրադառնում, որովհետև կարծում ենք, որ այն ավելի լայն և մանրամասն լուծում պահանջող խնդիր է, ուստի արժանի է հատուկ ուղադրության: Սակայն այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ գրանցում ամենանախնականը «լույս» իմաստն է, որից հետագայում ածանցվում են «(երևացող) երկինք» կամ «ցերեկ» իմաստները: Նշենք նաև, որ հ.-ե. լեզուն կրողների առասպելական (բանաստեղծական) պատկերացումներում այդ հիմնական գաղափարը մատնանշվում է ոչ միայն ըստ էության՝ իր տարբեր կարգի հատկանիշներով («մեծություն, մաքրություն, տեւականություն և այլն»), այլև դրանց նկատմամբ արտահայտվող վերաբերմունքով՝ վերագրումներով («թուիլ, խօսիլ՝ գովերգել, պաշտել և այլն»): Հմտ. մինչքերիստոնեական Թուելեաց երգեր, քրիստոնեական Արևագալի երգեր

38 Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. հ. 1, Երևան, 1940: ն ու յ ն ի ՀԱԲ. հ. 1, էջ 657-658, 671-673: Հմտ. Վ. Հ ա մ բ ա ր ձ ու մ յ ա ն. Մովսես Նորեւացու «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը. - ՊԲՀ, 1995, № 2, էջ 235:

39 Հ. Ա ճ ա ո յ ա ն. ՀԱԲ. հ. 4, էջ 411:

40 Г. Б. Д ж а у к я н, Л. А. С а р а д ж е в а, Ц. Р. А р у т ю н я н. Очерки по сравнительной лексикологии армянского языка. Ереван, 1983, с. 32-33, 56-57. Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախադրային ժամանակաշրջան, էջ 117-118, 217:

41 Երկին բառի նոր ստուգաբանության անդրադառնալու ենք առանձին՝ ոչ միայն ելնելով հիմքում բնկած հ.-ե. արմատի իմաստային (թեմատիկ) կառուցվածքից, այլև նկատի ունենալով հայերենում այդ արմատի տարբերակային արտացոլումների ուսումնասիրման անհրաժեշտությունը:

արտահայտությունները, ինչպես նաև «Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ ընդթեամբ» (Եզնիկ Կողբացի) և այլն<sup>42</sup>:

Ավելացնենք նաև, որ Հ.-ե. \*t<sup>h</sup>ieu->Հայ. \*տի-եւ (գրաբարում՝ թիւ, թուլիւ, Հմմտ. հոմ. հուն. Θέατο «թվաց, թվում էր», ὄηλος տեսանելի, երևացող»)՝ թուլի «թվում է» ձևերի նախնական իմաստն է «ասել, պատմել», իսկ Հետագայում նաև՝ «գովերդել (Աստծուն)» (րանավոր մտածողութամբ՝ «Աստված կանչել»), «արևագալը գովերգել»: Եվ այդ իմաստ(ներ)ը կան ուրարտերենին անցած tia(u) «ասել, պատմել» բառում, որից էլ ամենայն հավանականությամբ, ամենանախնական իմաստի պահպանումով՝ ուրարտ. Diu(e)hi >Տայք տեղանունը<sup>44</sup>:

Իսկ ինչ վերաբերում է Հին Հայ. տէր (տի-այր) և տիկին բաղադրություններին, ապա առաջիմ վարկածի ձևով նշենք, որ դրանք մի տեսակ նորակազմություն են գրաբարի մեջ՝ թերևս հակադիր եզրեր լինելու գործառական բաղադրություններ, սկզբնապես որպես այդպիսին, այնուհետև քրիստոնեական ոլորտի առումով: Այնինչ, նախագրաբարյան, եթե ոչ նաև ավելի վաղ ժամանակներում պիտի ունեցած լինեն ոչ միայն ձևային, այլև իմաստային նախնականություն:

Ըստ այդմ կարծում ենք, որ Հայ. տէր (տի-այր) բառի (հարաբերականորեն) նախնականը, թեկուզ միջանկյալ օղակ, պիտի եղած լինի \*տի-(Հ)այր (\*տիւ-(Հ)այր) <Հ.-ե. \*t<sup>h</sup>ieu(s)-p<sup>h</sup>iHt<sup>h</sup>er- «Հայր-աստված» (Հմմտ. ՀՀնդ. Dyāus pitā «Հայր-աստված», «Երկինք-աստված», հուն. Ζεῦ πάτερ (կոչ. հոլ.) լատ. Iūpiter «Յուպիտեր», լուվ. tatis Tiuz «աստված-Հայր», նաև հին ռուս. Стрибогъ և այլն<sup>45</sup>: Հմմտ. նաև մի կողմից՝ խուռ. Tesub ուրարտ. Teysəba/Teysəbā «ամպրոպի աստված» և մյուս կողմից՝ ուրարտ. Tospa (<\*Tor<sup>o</sup>spā, Հմմտ. աքքադ. Turušpa, ընդ որում Tur-ի համար՝ հիւլ. Tyr «պատերազմի աստված»<sup>46</sup>, այլև Tuspa<sup>47</sup>:

Այնուհետև, տիկին բառի ղեպքում հավանաբար կարելի է իբրև նախնական ղիտել \*տի-մայր (<\*տիւ-մայր, Հմմտ. Դեմետրէ<հուն. Δημήτηρ «Երկրագործության աստվածուհի») ձևը՝ այն հանգեցնելով Հ.-ե. (վերա-

42 Մ. Աբեղյանը Թուրքիայի երկրի արտահայտությունները տվել է այլ բացատրություններով: Մ. Աբեղյան. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ. - Երկիր, հ. Ը, Երևան, 1985, էջ 84-89:

43 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 227, 791:

44 Ըստ Մ. Խաչիկյանի՝ ուրարտ. tiwə «խոսք, իր՝ բան», tiza, tiz-nə «նույնը», tiwə «աստծու հատկանիշը»: М. Л. Х а ч и к я н. Хурритский и урартский языки. Ереван, 1985, с. 48-49.

45 Ավելի մանրամասն տե՛ս Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 777, 791-797: Հմմտ. С. W a t k i n s. The American Heritage Dictionary of Indo-European Roots. Boston, 1985, pp. XVII, 10.

46 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 36, 271, 799:

47 М. Л. Х а ч и к я н. Նշվ. աշխ., էջ 19, 34-36, 40, 45, 48, 58-59, 74, 117, 134, 143, 147:

կանգնելի) \*t'ieu(s)-mat<sup>h</sup>er- «մայր-աստված» բաղադրույթյանը, եթե ընդունենք, որ իմաստային և գործառական ինչ-ինչ հիմունքներով պիտի տեղի ունեցած լինի մայր բաղադրիչի փոխարինում կին բաղադրիչով, ընդ որում բառիմաստային տարբերակների բաղարկույթյան (կոնտամինացիայի) պայմաններում:

5.4. Վերևում հայ. \*տուած ձևի մեջ առանձնացրինք \*տու (հնչումով՝ \*տոու) արմատը (հիմքակազմական բաղադրիչը), ուստի -ած բաղադրիչը ներկայանում է իբրև առանձին երևույթ: Վերջինիս վաղնջական և հնագույն հայերենի փուլերում ունեցած հիմքակազմական (բառակազմական) արժեքի մասին մինչև օրս չունենք հավաստի բացատրություն: Նույնը կարելի է ասել այդ բաղադրիչի ծագման վերաբերյալ:

ա) Այդ -ած բաղադրիչը մինչև այժմ քննույթյան է առնված հին գրական հայերենի տվյալների հիման վրա՝ ծագման պարզաբանմանը վերաբերող որոշ (հնարավոր համարվող) մեկնաբանումներով<sup>48</sup>:

Գ. Զահուկյանը գտնում է, որ հին հայ. -ած վերջածանցը մի կողմից հանդես է գալիս այնպիսի կազմույթյուններում (հմտ. գլծած, երկիւղած, ողորմած, կատաղած, յօզնած, ուսած), որոնք «հետագայում դերբայացել են», մյուս կողմից կազմել է այնպիսի ձևեր (հմտ. ասած, գործած, կազմած, կոտորած, ձուլած), որոնք թերևս տարբեր են նախորդ տիպի կազմույթյուններից: Իսկ վերջածանցի ծագման վերաբերյալ նշվում է, որ «ծագում է ած-ել բայի արմատից (հմտ. գլծած «գուլթ ածող»): Այս ամենով հանդերձ նշվում է նաև, որ «հնարավոր է համարվում նաև գոյականակազմ -ած-ի հնդեվրոպական ծագումը՝ հ.-ե. \*g>հայ. ծ անցմամբ. հմտ. հուն. ἄρπασ, -ἀγος «թալանչի, ավարառու, թալան, ավար» հղելով Գրեպինի հիշյալ աշխատանքին<sup>49</sup>:

բ) Այն, որ հայ. -ած. բաղադրիչն ունի հ.-ե. ծագում, որը կարելի է հիմնավորել համեմատական լեզվաբանության նորագույն տվյալներով, այլև այդ տվյալների տարբերակային (վարիատիվ) քննույթյան եղանակով, որևէ կասկածի տեղիք չի կարող տալ: Կարծում ենք, որ այդ մասնիկը նույնպես հանդես է գալիս անվանական ձևերի այնպիսի նշանակումներով, որոնք հին դրական հայերենում առանձնացել են իբրև այս կամ այն իմաստային և գործառական արժեքի կրողներ:

Հայ. -ած. մասնիկը ծագում է հ.-ե. \*-OS ձևույթից: Վերջինս, ինչպես նաև ~S ձևույթը հ.-ե. լեզուներում, իբրև անվանական վերջավորություններ, հանդես էին գալիս ձևակազմական և իմաստաբանական որոշակի արժեքներով: Առ հաստատվում է հնդեվրոպական լեզվաբանության նորագույն ուսումնասիրությունների տվյալներով: Այսպես, Թ. Գամկելիձեն և Վ. Իվանովը, ոչ անկախ Կ. Շիրլսից, գտնում են, որ հ.-ե. \*-OS և ~S վերջավորությունները կազմում էին շնչավոր կամ որպես այդպիսին ըմբռնվող առարկաների դասային անվանումների ձևերը՝ ի հակադրություն հ.-ե. \*

48 J. G r e p p i n. Classical Armenian Nominal Suffixes. Wien, 1975. Գ. Զ ա - հ ու կ յ ա ն. Հին հայերենի վերջածանցների ծագումը. - ՊԲՀ, 1994, №№ 1-2, ալլև 1995, № 1: Ն ու յ ն ի՝ Հին հայերենի վերջածանցների ծագումը. - Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պրակ. 2. Երևան, 1998, էջ 5-48:

49 Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հին հայերենի..., էջ 55, ալլև էջ 8:

om վերջավորության, որը կազմում էր ոչ շնչավոր (անշունչ) առարկաների դասային անվանումների ձևերը: Այնուհետև, առաջին դեպքում գործ ունենք ներգործող (ակտիվ), իսկ երկրորդ դեպքում ոչ ներգործող (օբյեկտ հանգիսացող) դասի հետ: Դրանք ըստ էության անունների ուղղական և հայցական ձևերի նշանակիչներ (վերջավորություններ) են<sup>50</sup>:

Ըստ այսմ, հայ. \*տուած ձևը ընդհանուր նշանակմամբ հանգում է հ.-ե. \*t'ieu-os/\*t'ieu-s «աստված» ձևին. հմմտ. հհնդ. devāh, ավ. daeva- «դև (նախնական իմաստով)», լատ. diuus «աստված», հիսլ. Tyr «(սլատերագմի) աստված», լիտվ. dievas «աստված» և այլն<sup>51</sup>: Ավելացնենք, որ հնչյունական նոր օրենքներով պայմանավորված անցումներին (նախագրաբարյան վիճակը ներկայացնող ձևերին) այստեղ չենք անդրադառնում:

Հայ. \*տուած ձևը գրարար մատենագրության մեջ չի գործածվել, այլ հանդես է դալիս աստուած ձևի մեջ, որն էլ կազմված պիտի լիներ նախագրարարյան (հնագույն կամ վաղնջական հայերենի) փուլերում: Եվ հին գրական հայերենում նման կաղմությունները թերևս դիտվել են իրրև առանձին բառեր, սակայն նախկինում պիտի ունեցած լինեն բառակազմական (շարահյուսական միավորի) արժեք: Ըստ այսմ, աստուած բառի հետ համեմատելի է առաւօտ (առաւատ) բաղադրյալ կազմությամբ բառը, ընդ որում ոչ միայն ձևաիմաստային, այլև շարահյուսական-գործառական առումով:

6.5. Հայ. աստուած (<աս-տուած) բառի աս- բաղադրիչը (իբրև առանձին արմատ) ամենայն հավանականությամբ ծագում է հ.-ե. \*Has- «կրակաբան, կրակի աղբյուր՝ կրակ» (հիմքում «արև») արմատից: Ավանդական համեմատարանության մեջ այդ արմատն ընդհանուր առմամբ ներկայացվում էր առանց կոկորդային տարր պարունակող տարբերակի առանձնացումով, այսինքն՝ «կրակ», «այրել», ինչպես նաև «չորանալ, մոխրանալ», «մոխիր» իմաստային տարբերակների կրող էր հանդիսանում հ.-ե. \*as- արմատը<sup>52</sup>: Նկատի առնենք, որ նորագույն ուսումնասիրություններում այդ արմատին հատկացվում է ավելի հետագա իմաստ(ներ)՝ «օջախ», «գոհասեղան, զոհարան»: Հմմտ. խեթ. hassa- «օջախ», նաև «զոհասեղան», լատ. ara «զոհասեղան», այլև «զոհ», օսկ. aasai «օջախի մեջ» և այլն<sup>53</sup>: Ընդ որում գտնում են, որ այդ արմատի պարզական տարբերակը (կոկորդային տարրի կորստով) երևան է գալիս հ.-ե. առանձին բարբառային խմբերում (բացի անատոլիականից)<sup>54</sup>:

Այնինչ հայերենում, ինչպես կարելի է նկատել ստորև, ունենք թե՛ կոկորդային տարր պարունակող և թե՛ առանց կոկորդային տարրի հանգես եկող արմատական տարբերակներ: Տվյալ դեպքում կարելի է ասել, որ հայերենը բռնում է միջին դիրք հ.-ե. նման բարբառային խմբավորման մեջ:

50 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 271:

51 Նույն տեղում, այլև էջ 375–379:

52 J. P o k o r n y. Indogermanisches etimologisches Wörterbuch, 1-2. Bern-München, 1959–1969. К. W a t k i n s. Նշվ. աշխ., էջ 3–4:

53 Т. В. Г а м к р е л и д з е, В я ч. В с. И в а н о в. Նշվ. աշխ., էջ 158, 203, 699, 808, 884:

54 Նույն տեղում, էջ 203:

Ավելին, հայերենում ունենք հ.-ե. \*Has- կամ \*as- արմատի ածականով և առանց ածականի տարբերակային արտացոլումներ: Ստորև անհրաժեշտ ենք համարում անդրադառնալու այդ, ինչպես նաև մյուս կարգի՝ կոկորդային տարրի հետ կապված արտացոլումներին:

ա) Ավանդաբար ընդունված է, որ հայ. ազգել «չորացնել», ածին «(կրակի) մոխիր, ոսկորների մնացորդ հող» և ոստին «անջրդի, չոր, ցամաք» բառերը ծագում են հ.-ե. \*as- (իմա՝ \*Has-) արմատից, ընդ որում վերջինիս պարզ կամ փ (նաև փgh), \*d ածականները պարունակող տարբերակներից<sup>55</sup>: Դժվար է նկատել, որ հիշյալ բառերն ունեն իմաստային որոշակի ընդհանրություն՝ կապված իրենց բուն կամ նախնական նշանակման հետ:

բ) Գ. Զահուկյանը, նկատի ունենալով Հ. Հյուբշմանի և նրան հետևողների տեսակետները, հայ. հաս- «հասնել» արմատը բխեցնում է հ.-ե. \*enek ձևից<sup>56</sup>: Նախ, է. Բենվենիստը ժամանակին դեմ է եղել Հյուբշմանից եկող նման ստուգաբանությանը՝ գտնելով, որ վերջինս հաս- արմատն անտեղի է դուրս բերել հայերենի իրանական փոխառությունների շարքից՝ նրան հատկացնելով հ.-ե. ծագում<sup>57</sup>: Այնուհետև, եթե հայ. հաս- արմատին տրված լիներ ավելի հիմնավոր ստուգաբանություն, և եթե վերջինիս հետ ըստ ընդհանուր աղբյուրից ծագելու և ոչ թե փոխառություն լինելու ճանապարհով բացատրվեին մպարթ. has «տարիք, ծագում», hasenag «ի բնե, ըստ ծագման» բառերը, ապա կարծում ենք, որ Հյուբշմանի մոտեցումն ավելի հիմնավոր կարող էր լինել: Ըստ այսմ կարծում ենք, որ հայ. հաս- (նաև հաս-ակ «տարիք, տիք», հաս-ու «տեղյակ, վերահասու», հաս-ուն «լրումին հասած, հասունացած», հաս-լ-անալ «հասու լինել, իմանալ») արմատը ծագում է հ.-ե. \*Has ձևից, ընդ որում կոկորդային տարրի պահպանմամբ, որն անշուշտ արմատի հնագույն լինելու հատկանիշ կարող է լինել:

դ) Հայերենում եղակի կիրառությամբ ունենք առանձին հաս «տիվ, ցերեկ» բառը, որն ըստ Աճառյանի հանդիպում է միայն Երեմիա Մեղրեցու բառարանում<sup>58</sup>: Ամենայն հավանականությամբ այդ բառը նույնպես ծագում է հ.-ե. \*Has- արմատից:

զ) Հին գրական հայերենում գործածվելիս է եղել նաև աստել «ամուսնություն համար նշանած ընտրել, աղջիկ ուղղել» բայը, որից է կազմվել են աստող «աղջիկ ուղղող՝ փեսացու», հաստիլ «աղջկա նշանվելը» բայաձևերը: Ընդ որում աստ-//հաստ- տարբերակային արմատը մինչև այժմ չունի որևէ հավաստի ստուգաբանություն<sup>59</sup>:

55 H. Hübschmann. Armenische Grammatik. Teil 1, Leipzig, 1897, S. 464. Հ. Աճառյան. ՀԱԲ. հ. 1, էջ 46-47, Հ. Սուքիասյան. Աճականը հայերենում. Երևան, 1986, էջ 136:

56 Գ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 52, 122:

57 E. Benveniste. Elements parthes en armenien. - "Revue des etudes armeniennes". T. 1, 1964, pp. 1-2.

58 Բառգիրք հայոց, քննական բնագիրը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 181:

59 Հ. Աճառյան. ՀԱԲ. հ. 1, էջ 277: Տե՛ս նաև Դ. Ա. Капанцяна. Хурритские слова армянского языка. - "Известия" АН Арм. ССР, 1951, 5: О н

Գ. Ղափանցյանը փորձել է հայ. աստեի բայի ծագումը կապել խուռ. asti «կին, կին ամուսին» ձևի հետ՝ իրրև հայերենին անցած հնադուրյն փոխառություն, որը բավականին խոցելի է թե՛ հնչյունական և թե՛ նախնական իմաստաբանության տեսակետից: Թերևս այս հանդամանքն են նկատի ունեցել որոշ լեզվաբաններ, երբ նման հանգեցումը դիտել են ոչ վերջնական լուծում հանգիսացող մոտեցման արգյունք: Գ. Ջահուկյանը, նկատի ունենալով նաև աստեի բայի նման ստուգաբանությունը, գրում է, որ «կան դեպքեր, երբ դժվար է ընտրություն կատարել սեմական և ոչ սեմական հին ու նոր աղբյուրների (խուռերեն, ուրարտերեն և այլն) միջև»<sup>60</sup>: Եվ նման վերապահություններ էլ աստեի բայը տեղ է գտնում Գ. Ջահուկյանի կողմից առանձնացվող խուռերենից կատարված փոխառությունների ցանկում<sup>61</sup>:

Այնինչ, հակված ենք մտածելու, որ եթե հնարավոր լինի աստեի//Հաստիլ բառի հիմքում ընդունել «տարիքի լրանալը, հասունացած տարիքի լինելը» նախնական իմաստը, ապա կարելի կլինի կարծել, որ հայ. աստե//Հաստ- արմատը ծագում է հ.-ե. \*Has- արմատից (հմտ. հայ. ոստ-ին):

ե) Հին գրական հայերենում գործածված է նաև բնիկ Հաստ «ամուր, հաստատուն, ուժեղ» արմատական բառը, որը ծագում է հ.-ե. \*pasto- արմատից<sup>62</sup>: Այդ արմատով ունենք բազմաթիվ կազմություններ, յրոնցից այստեղ առավել ուշագրություն են արժանի Հաստեի «ամրացնել, հաստատել, ստեղծել», Հաստիչ «ստեղծող», Հաստուած «ստեղծված, կերտված» ձևերը: Ինչպես կարելի է նկատել, սույն Հաստ արմատական բառը և դրանից կազմված ձևերը արտահայտության պլանում որոշակիորեն համընկնում են վերը նշված Հաստ- (<Հաս-) արմատին, թեև բովանդակության պլանում ունեն բոլորովին տարբեր նշանակումներ: Գրավոր շրջանի հայերենում Հաստեի, Հաստիչ, Հաստուած բառերը, իբրև «ստեղծել», «ստեղծող» և «ստեղծված, կերտված» իմաստների կրողներ, շփոթվել են մեր բուն ուշագրության առարկա աստուած «արարիչ լույսի աղբյուր հանդիսացող և լույս տվող լուսատու», ինչպես նաև Հաս-, աստեի//Հաստեի ձևերի հետ:

Այսպես, օրինակ, նման շփոթի արդյունք ենք համարում Ագաթանգեղոսի երկում տեղ գտած հետևյալ կիրառությունները. «Պաշտել զաստուած արարիչ, և գորդին Հաստիչ, և զհոգին կազմիչ», «Վասն գիցն, զորս կոչես դուս աստուածս, ստոյգ իսկ են Հաստուածք»<sup>63</sup>: Նման իմաստային կիրառությունների հանգիսում ենք նաև Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մեջ, ինչպես նաև հետագա հեղինակների երկերում: Դրանք կրում են տվյալ ժամանակաշրջանի լեզվական մտածողության և վերջինիս հետագա ամրագրման կնիքը:

ж е. Историко-лингвистические работы. Т. 2, Ереван, 1975, с. 279. Գ. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն (հին շրջան). Երևան, 1961, էջ 105:

60 Գ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 466:

61 Նույն տեղում, էջ 424-426:

62 Հ. Աճառյան. ՀԱԲ. հ. 1, էջ 49: Գ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 142, 216:

63 Ագաթանգեղոսյ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց. էջմիածին-Տփղիս, 1909, էջ 34, 40:



Հ.-ե. ծագում ունեցող հիշյալ երկու կարգի արմատները և դրանցից կազմված ձևերը հայերենի հնագույն և վաղնջական փուլերում ունեցել են իմաստային կիրառության տարբեր ոլորտներ: Իսկ նախագրաբարյան, առավել ևս գրաբարի շրջանում տարբեր ոլորտներում գտնվող ձևերի միջև, ընդհանուրապես բաղադրության (կոնտամինացիայի) հետևանքով տեղի է ունեցել որոշակի փոխարինում: Գրավոր աղբյուրներում հաստատագրված իմաստները ժամանակի ընթացքում կայունացել են և ընդհանրացել: Վերջինս լավագույնս հիմնավորվում է հայ մատենագրության մեջ աստուած բառին տրված տարբեր կարգի մեկնությունների և բացատրությունների տվյալներով:

6. Ինչպես նկատում ենք, հայ. աստուած (քրիստոնեական շրջանում Աստուած) բառն ունի հնգեվրոպական ծագում, որի համար վերականգնում ենք \*Has-t' ieu-ūs ձևը: Վերջինս հայերենի հնագույն կամ վաղնջական ժամանակաշրջանում առաջացած բաղադրյալ կազմություն է, որի բաղադրիչներն իրենց համարժեք արտացոլումներն ունեն հ.-ե. մյուս, առավել ևս անատոլիական լեզուներում:

ա) Հայերենի հնագույն կամ վաղնջական ժամանակաշրջանում բաղադրյալ կազմություն հանդիսացող աստուած (աստու-ած, հնչումով՝ \*աստու-ած, ավելի հին՝ \*աստու-աս և այլն) ձևը, ինչպես կարելի է ենթադրել, առաջացել է աստուած վերջնական բաղադրության (հիմքում ունենալով տու-ած նախնական բաղադրությունը): Նկատի ունենալով բաղադրության նման եղանակը, ինչպես նաև ժամանակագրության հետ կապված որոշ հանգամանքներ՝ կարծում ենք, որ հայ. աստուած բաղադրության մեջ բուն կամ գերակա բաղադրիչը \*տու- ձևն է (ի համապատասխանություն ցեղակից լեզուների ձևերի):

բ) Ըստ այդմ հայերենի հնագույն կամ վաղնջական ժամանակաշրջանի համար վերականգնվող \*Տուած ձևը կարող է դիտվել իբրև համարժեք անատոլիական, հնդիրանական, հունական և այլն ձևերին: Հմմտ. խեթ. Siuaz (<\*Siu-az), պալ. Tiuzaz (<Tiu-az), լուվ. Tiuat (<\*Tiu-at), հհնդ. Dyauh- (<\*Dya-uh), հուև. Ζευς (<\*Ζε-υς, սեռ. հոլ. Διός <\*Δι-ός), լատ. deus (հլատ. Diouis <\*Diou-is), միկ. հուև. di-we և այլն:

գ) Առայժմ ձեռնպահ մնալով հիշյալ և նման կարգի ձևերի գործածության, գրանցում գործող հնչյունական համապատասխանությունների ժամանակագրության հետ կապված հարցերի առաջագրումից հարկ ենք համարում նշել, որ հայ. \*տու- ձևից առաջացած (կամ նրա հիման վրա բաղադրված) \*տուած (իբրև դիցաբանական անվանում՝ \*Տուած) ձևը ամենայն հավանականությամբ պիտի եղած լինի հայոց բնիկ հնգեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լույսի», հետագայում՝ «աստծու») անվանումը՝ «(արևային՝ ցերեկվա) լույս», «լույսի աղբյուր (օջախ)» «լույս տվող լուսատու» նախագրաբարյան (հնագույն կամ վաղնջական) իմաստների նշանակումով:

դ) Հայ. \*տուած (\*Տուած) բառի՝ իբրև դիցանվան (գերագույն աստվածության անվանման՝ թեոնիմի) տարբերակային (վարիատիվ) մոտեցումով իմաստաբանական-տիպաբանական վերլուծությանն անդրադառնալու ենք

մեկ այլ աշխատանքում՝ նվիրված Հայոց դիցանունների ծագումնային հնարավոր վերականգնումներին, Համեմատական-աիպարանական վերլուծությունը:

ե) Հայ. աստուած բառադրությունը, իբրև բառային միավոր, Համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին բառ, սակայն ոչ ավելի ուշ, քան V դ. արդեն որպես որոշակի հասկացություն անվանում հանդիսանալը և ըստ այդմ առանձին բառի արժեքով, ավելի կոնկրետ նշանակությունը դործածվելը: Եվ պատահական չէ, որ հետագա հեղինակներն իրենց երկերում տարբեր առիթներով փորձում են տյգ բառին տալ այս կամ այն բացատրությունը, մեկնաբանել բառի հիմքում ընկած հասկացության նշանակությունը:

## ВАРИАТИВНОСТЬ ИНДОЕВРОПЕЙСКОГО КОРНЯ И ПРОИСХОЖДЕНИЕ И ТИПОЛОГИЯ АРМЯНСКОГО СЛОВА ASTUAC "БОГ"

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

### Р е з ю м е

Армянская христианская церковь отличается особой терминологией. Она содержит не только новые, но и такие термины, которые были образованы в дописьменном периоде истории армянского языка, тем самым сохраняя свои доисторические смысловые употребления и семасиологические значения. Слово *astuac* "бог" является собственно армянским. Оно было в центре внимания филологов-толкователей текстов в новые времена. Особое внимание уделено лингвистами-компаративистами при исследовании отдельных вопросов сравнительной грамматики, в частности, истории дописьменного периода армянского языка. Происхождение и типология арм. слова *astuac* "бог" исследуются на основе принципов вариативности, выдвинутых в последние годы автором настоящей статьи. Следовательно, для арм. слова *astuac* нами восстанавливается сложная форма \**Has-t'ieu-as*, компоненты которого имеют свои адекватные отражения в других и.-е., в частности, анатолийских языках. В соответствии с этим реконструируемая нами арм. форма \**Tuac* становится эквивалентом соответствующих форм анатолийских, индоиранских, а также греческого и др. языков. Арм. *as-tuac* (тем самым более древняя форма \**Tuac*) по всей вероятности был исконно армянским названием (т.е. названием и.-е. происхождения) главной верховной силы (т.е. "света", в дальнейшем — "бога"), со значением или смысловым употреблением "источник света (очаг)", далее — "дающий свет; светящий, светило", которые функционировали в дограбаровском (дописьменном) периоде истории армянского языка. А армянская христианская церковь унаследовала именно эти значения, применяя их в новых условиях.

THE VARIATION OF THE INDO-EUROPEAN ROOT  
AND THE ORIGIN AND TYPOLOGY OF THE ARMENIAN  
WORD *ASTUAC* "GOD"

VAZGEN HAMBARDZUMYAN

S u m m a r y

The terminology of the Armenian Christian Church is related to the ancient times and at present it mainly preserves its former meanings and significance. The word *astuac* belongs to the main layer of the Armenian word stock and its origin and semantics have attracted the attention of the past and present authors, have been the subjects of the investigators of the comparative linguistics and specially of the history of the pre-historical Armenian. We reverberate to the origin and typology of the word of the principles of the Indo-European languages, specially the Armenian language facts, principles of the variations studied by us. So for the Arm. word *astuac* we raise again \*Has-t'iey-os, where the components have their equivalents in other IE, specially in the Anatolian languages. Thus the Arm. form \**Tuac* becomes equivalent to the Anatolian, Indo-Iranian, Greek and other forms. The Arm. *Astuac* (if not more ancient \**Tuac*) most probably should have been the Arm. native, IE nomination of the supreme power ("light", later-"God")-"(daytime sun) light", "(source of) light" and "liminary" pre-historical (pre-ancient or preliterary) Armenian meanings.